ցած, մենք հազիւ կարողացանք հասնել այն ձորին, որ Մըհէն ասում էր, եւ իրաւ, այնտեղ գտանք հովիւների վրաններ: Բայց կատաղի շները չէին թողնում մօտենալ, իսկ վրանների մէջ բոլորը քնած էին: Մըհէն ինձ աւելի երկիւղ տոեց, ասելով թէ շների ձայնից հովիւները կը զարթնեն, եւ մեզ աւազակներ կարծելով, գուցէ հրացանով հեռոից կը զարկեն: Բայց ես այնքան յոգնած էի, որ Մըհէի խօսքերը բանի տեղ չդրեցի, ես պատրաստ էի ամէն վտանգ յանձն առնել, գէ՛թ մի փոքր հանգստանայի:

Բայց Մըհէն հեռոից մի տեսակ ձայն արձակեց, որի միտքը այն էր թէ՝ «հիւր ենք»: Վրանների գիշերային պահնորդներից երկուսը մօտեցան մեզ: Մըհեն այժմ սկսեց խօսել հայերէն: Այլեւս երկար բացատրութիւններ պէտք չէին. մեր հայ լինելը փարատեց նրանց կասկածանքը, եւ իսկոյն ընդունոեցանք: Հովիւները հայեր էին: Մեզ տարան տանուտէրի վրանը, որ հովիւների գլխաւորն էր: Տանուտէրի մեծ որդին ընդունեց մեզ, իսկոյն վառել տոեց փայտեայ լուցկիներ ճրագի տեղ, եւ առանց մեզ հարցնելու, հրամայեց ուտելու մի բան պատրաստել: Ես յայտնեցի, թէ ուտելու ամենեւին ախորժակ չունեմ, թէ շատ կը ցանկանայի ինձ մի անկիւն շնորհէին, որ մի փոքր քնէի եւ հանգստանայի:

— Թող նա քնէ, — ասաց Մըհէն, — ես ուտել եմ ուզում. գայլի պէս քաղցած եմ:

Վրանի մի կողմում, ուր պառկած էին մի քանի երեխաներ, ինձ համար պատրաստեցին անկողին. գլուխս բարձի վրայ դնելն եւ աչքերիս փակոիլը մին եղաւ: Որքա՜ն դուր է գալիս քունը վաստակած մարմնին, որքա՜ն քաղցր է լինում նա, մանաւանդ հովոի խաղաղ վրանի տակ...

Քանի՞ ժամ քնել էի, ես չգիտեմ, միայն երբ արթնացայ, արեգակը կանգնած էր կէսօրոայ տեղում: Մըհէն չկար. նա անյայտացել էր:

Տանուտէրը, որ մի ծերունի մարդ էր, պատմեց, թէ քո ընկերը հեռացաւ այստեղից հէնց գիշերով, երբ իր քաղցը մի փոքր յագեցրուց: Ասաց, թէ նա սաստիկ շտապում էր, այս պատճառով սպասել չկարողացաւ:

Ես շատ բարկացայ կիսախելագար Մըհէի մի այսպիսի վարմունքի վրայ, եւ մտքումս սկսեցի նախատել Մարօին, որ ինձ այն յիմարի ձեռքը գցեց: Բայց տանուտէրն ինձ հանգստացրուց, ասելով.

— Դու քո սիրտը մի՛ դառնացնի, դու օտար տեղում չես, այստեղ քո տունն է, հանգստացի՛ր. բայց երբ կը կամենաս գնալ, այն ժամանակ իմ որդիներից մէկը կտանէ քեզ այնտեղ, ուր պէտք է գնայիր: